


փաշա ալ անդամակցութեան հրաւիրուեցաւ: Ժողովներու և յանձնաժողովներու մէջ իր ուսումնասիրութիւնները, վարչական տեսակէտով զանազան քննութիւնները և խօսելու կարողութիւնը դնահատուած էին մեծապէս եւ իր համոզելու ձեւերը ամենէն աւելի հասկցուած էին:

Իր առաջին կնոջմէն ունեցաւ երեք մանչ զաւակ որոնցմէ երէցը Անտոն լոժիչկէ և Բարիզի մէջ և միւսը գեղազօրծ նոյն քաղաքին մէջ: Նրուանդ առաջին զաւակ մըն ալ ունեցած է որ գեղատի հասակի մէջ մեռած է:



### ՀՐԱԺԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ \*

(ՖԱՐՐԱՐԻ)

Այս հիւրասէր ափերը յաճախակի հարցնում են օտարերկրացուց. «Ի՞նչ համարում ունիք մեր երկրի և հաստատութիւնների մասին»: Ննթաղ-բումբում որ հարցնողներն ուղում են ճշմարտութիւն իմանալ, կամ ճիշդ այն տպաւորութիւնը, որ եկողի վերայ գործում է ձեր՝ ոչ նուազ նաեւ մեր՝ հայրենիքը:

Ձեր երկրում ես ընդունուեցայ որպէս բարեկամ, թէպէտ ոչ մի քանով տակաւին չեմ արժանացել ձեր այդչափ բարեւորութեան: Ամէն-քը, սկսուած կաթոլիկ արքեպիսկոպոսից մինչև

\* Մեր խնդ մամուլի մէջ սովորութիւն է դառնել կրօն, եկեղեցի, դաւանութիւն, վարդապետութիւն, աստուածաբանութիւն, ուղիղ ու սխալ, քղերութիւն ու կամքի շարժումը, միամտութիւնն ու խորամանկ սխտեր — ի մի խառնել և այդ ամէնը հաւասարադիւ մարդկային բշտաբանութիւն հոշակել, որովհետեւ հրապարակախօսները՝ քղաշարքում ժամանակ՝ պատմութեան դասագրքի մի երեսում կարդացել են, րի եղել է ժամանակ, երբ որ հաւաստեցնութիւնը հաշտեցի է մարդկային հանձարը: Այսպիսի ծանօթութեանը նոյն մի քոյիով կարգում են և այն կարծիք, րի ուրեմն իրանց քանակած «աստուածաբանութիւն» նոր մեքեր ի կարող պարտեակել: — Ահա Ժառարի մի ձառն անա քաղաքաւար «աստուածաբանութիւն», որ պատմութեան միւս երես է քաց անում և այնքան նոր նոր մեքեր է հաղորդում, որ նոյն իսկ մեծագոյն քանաստեղծ-փիլիսոփայ Գեօրգիյն կը գոհացնէր, այն Գեօրգիյն, որ մի անգամ ընդ միշտ սահման է գծել հիւրական նորամտութեան և հոգիւոր նորոգութեան մէջ:

Ծան. Ս. Ս.

Շկէր աղանդաւորների երկնքերը, ամէնքն ինձ հանդիպեցին բարեսիրութեամբ և յարգանքով. ես խօսել եմ ձեր դպրոցներում, համալսարաններում, քարոզել եմ եկեղեցիներում, ապա ուրեմն թոյլ տուեցէք, որ որպէս բարեկամ մտաւ ընկեր պատասխանեմ այդ մշտանորոգ հարցին:

Հատ անդամ այսպիսի խորհրդածութիւններում խառնվում է սնամիտութեան և որդեմքտութեան ոգի: Ձեր մեծանուն ներկայացուցիչն Անդրիայում, միտաբեր Լովէլը, երբեմն խօսում է խիստ լեզուով Անդրիայի և անգլիացիների գէմ: Նա մի տեսակ է հրատարակել Անգլիայի մասին այս վերնագրով. «Օտարականի ներողամիտ կարծիքը»: Բայց ես իմ խոնարհ դրութեամբ և համեստ պահանջներով չեմ կարող սնամիտ կամ յանգուգն լինել, Հրապարակախօսներից ոմանք ձեզ վերաւորել են շողորթութեամբ, ոմանք խոցոտել են ծաղրով և անարգար դատապարտութիւններով: Յոյս ունիմ, որ ես կը կարողանամ գերծ մնալ մէկից և միւսից — քննադատութեան այդ Սիլիւայից և Քարիւր-գէնց:

Խոստովանում եմ, ինձ շատ զարմացրել է այս ազգի՝ ոչինչ արդելք չճանաչող՝ ամենայաղթ եռանդը, որ աննկուն ձգտում է շեշտակի մի անգամ ընդ միշտ ծրագրած շաւղով: Իմ սիրաբար շարժուել է Ամերիկայի առատաշնորհ և մեծանուն հիւրասիրութիւնից: Ես բախտաւոր կը լինիմ, եթէ իմ համեստ խօսքերը փոքր ինչ օգուտ բերեն. երանի թէ աւելի ևս զօրանայ այն բարեկամութիւնը, որով կապուած են երկու ազգեր և երկու եկեղեցիներ, որ իրանց խորութեանը չնայ ելով, մի և նոյն նպատակի հետամուտ են:

Ձեր պատմութեան մէջ, որ այնպէս կարճ, քայց այնպէս փառաւոր է եղել, յայտնի երևում է Աերին Նախախնամութեան մատը: Յայտնի է, թէ ինչպէս երբեմն պատմութեան փոքրագոյն հանդամանքներով՝ ստեղծուել է ազգերի տեսական կեանքը: Թռչնի թռչելի շարժմամբ արդէն ներգործուել է համայն մարդկան պատմութիւնը: Յիշեցէք թութակի երամի անհուն նշանակութիւնը, որով փոխուել է Նուրմաթի ուղղութիւնը, այդ պատճառով նա դատաւ Հիւսիսային՝ և ոչ թէ Հարաւային Ամերիկան, Թողնեց այսպիսի տարօրինակութիւնները: Մենք ունինք աւելի ծանրալիւծ վիպութիւն, Վաշինգտոնի վիպութիւնը. «Երբ որ ես տեսնում եմ, առում է նա Նախախնամութեան միջամտութիւնը մեր յեղափոխութեան ընթացքի մէջ ... անկասկած իմանում եմ աստուածային ողորմութիւնը ... Ամերիկացիք աւելի, քան ուրիշ որ և է ազգ, պէտք է խոստովանեն և երկրպագեն այն անբերելի Բազուկը, որով անօրինվում է մարդկային



գործերը... Ազատութեան ճանապարհի իւրաքանչիւր քայլափոխը Նախախնամութեան նշան էր... Կրօնն և բարոյականութիւնը ունենալով իրենց հաստատութեան համար, Այն մարդը, որ յանգրդնում է այս սիւները խախտել, արժանի չէ ազգային սիրոյ: Այս գրել է Վաշինգտոնը՝ ձեր երկրի հայրը, հիմնուելով իւր փորձառութեան վերայ:

Արդարեւ ձեր պատմութեան քէնց առաջին օրերը վերայ գրողուել է Նախախնամութեան մասը: Եւրո որ Կոլումբոսը Բարեկենդիւ պալատում պատմեց նոր ցամաքի գիւտը, թաղաւոր և թագուհին, արցունք թափելով իջան դահլիճ, լոկեցին և բազմակները տարածելով, սրտերը ուղղեցին դէպի երկինք, գոհանալով Տէր Աստուծոյ, որ Նա ջրերի անապատում առաջնորդեց Կոլումբոսի նաւերը: Մի և նոյն ժամանակ հանգիստ որ կերպով հնչուեցան Laudamus-ի օրհնութիւնները:

Թոյլ տուեցէք, որ ցոյց տամ ձեզ, թէ ձեր պատմութեան քայլերը միշտ այդ կրօնական արշաւուի շարունակութիւնն են եղել:

ա. Թէ ովքեր են եղել ձեր նախահայրերը, ինչեղք այն խորխորատը, սրից որ դուք փրկուել էր: Դուք դիմէք, որ մի քանի դադութիւնների առաջին կեսները ներկուել է ոճրագործութեան աւելումով: Բայց երեւի դուք կարգացած կը լինել ձեր բարերար հրեշտակ՝ տիկին Չիզհոմին ուղղած այս տողերը. «Չիզհոմ» այս երկրի գլխին եկած ոչ մի դար վկայ չի եղել այնչափ դժուարաբեւոյն, այնչափ ի վերուստ թելադրած ձեռներեցութեան, որչափ որ քո դարն է: Արատը փախուստ է տալիս քո առջևից, և քո շնորհով լոյս ստացած Աստորաշախի (Հնդկաց արշիպելագոսի) ամենքը՝ այլ ևս չեն ընդունում Եւրոպայի փառած ուրումները, որ ծերակոյսները ցրել տալով դուրս են թափում, միակ առողջ մնացած ցամաքը վաւակու համար:

Պարոններ, թէպէտ դուք ձեր ծագումը ստացել էք պանդուխտներից, բայց այդ մարդիկ եղել են խելախի և ազատ, երակների մէջ ունեցել են արիւն, զիւցապունների արիւն: Ասորի թափառական էր քո նախահայրը, ասաց եբրայեցւոյ մարդարէն իւր ազգին՝ Առանգների մէջ թափառող մի քանի անգլիացիք եղել են ձեր հայրերը, նոքա էին հաւատարիմ, քաջ և երկիւղած առաջին Աստուծոյ, ուստի և նոքա տկութեան անպարտելի զօրութիւնը՝ աշխարհ զրգեցրեց: Sicut Patribus, sit Deus nobis (Որպէս նախնաց, նոյնպէս ևս մեզ զօրաւոր լինի Աստուծո՝ Բոստոնի նշանաբան):

Ձեր այժմեան բնաւորութեան նախապատկերը ուխտաւոր հայրերի առաքնութիւնից է ծա-

ղում: Եթէ մի քանի դատապարտեալների օտքը Պլիմուտի ժայռի վերայ հաստատուելուց յետոյ, այնու ամենայնիւ փառաւորուեցաւ այդ ժայռը, պատճառն այն է, որ մերժուած տարազեալները հաստատուն կամքի, անպարտելի համարձակութեան, խոր հաւատոյ և անկեղծ աղօթքի ծնունդ էին: Մի բուռն քաջեր, կատաղի ուղիւսնի հետ կռուելով, հայրենիքից լուսնած, ազատութեան դադափարով տողորուած, տարան Ամերիկա ինչպէս ասաց Գլադստոնը, «Անգլիայի քաղաքականութիւնից ժողովրդապետական ոգի, իսկ այն տեղի կրօնից՝ բողոքականութեան կենդանութիւն»: Ես կաւելացնեմ, տարան նոքա, որը եղբայրներից հաւածուել էին: Ո՞վ ազատութեան առաքեալներ, ինչպէս զօրաւոր է ձեր սկզբունքները դաւանող պետութիւնը: Բայց ի՞նչ էր նոքա շունչ և հոգի տուողը հաւատոյ զօրութիւնը և ազատասիրութիւնը, Բոլինգթոն և Բրուտեր 1617 թ. գրում էին. «Մենք լիովին ապաւինեցանք Աստծուն, ծառայելիք նորան և ջերմ սրտով հաւատում էինք, թէ Նա մեր ձեռնարկութիւնը կը յաջողեցնէ, մեր անկեղծ միամտութեան համեմատ»:

Հիւսիսային Ամերիկայի առաջին գաղթականութեան հետ կապուած անունները, ամէնքը նշանաւոր են իրանց աղնուութեամբ: Ահա անբախտ Բալէյն, ամենափայլուն աստղը կոյս թագուհու շրջապատող լուսատու խմբի մէջ, այն թագուհու, որ Վիրջինիային իւր անունը տուեց (virgo, virginis—կոյս): Ահա Վեֆտէն Զոն Սմիթը—խաչակրի հոգու աէր անձնաւորութիւնը, նորա վարմունքների մէջ արդարամտութիւնը չի ճնշուել հանգամանքներից, Նա իւր կեանքում մաքառել է առաւելապէս ցածութեան, ամբարտաւանութեան և անիրաւութեան դէմ: Վիլիամ Պէննը միշտ հետամուտ էր, որ շրջապատողներին հասկացնէ, թէ տկարները, ճշմարտաւորներն և բարեպաշանները կազմում են մի հօտ, մի կրօն: Դուք, արժանաւոր յաջորդներդ, ունեցել էք նաև ուրիշ շատ նախորդներ:

Եւ ինչպէս աննյայտի երևում է Երկնային կամքը ձեր պատմութեան մէջ: Ոմանք դիպում և պատահմունք կանուանեն այն, ինչ որ Նախախնամութեան խորհուրդ է եղել: Ամերիկան աւելի նուազ՝ քան միւս երկիրները, իրաւունք ունի «պատահմունքին զոհեր մատուցանելու և ի պատիւ բախտի խունկ ծխելու»:

Այն կոյր պատահմունք չէր, երբ որ մարդկութեան բախտը կախուած էր մի բուռն քաջերի յաջողութիւնից: Կանադայի անառններում, նոր Աշխարհը դիպումով չյանձնուեցաւ պուրիտանների ձեռներեցութեան, որով այնչափ ծաղկեց արգիւնագործութիւնը: Կար ժամանակի երբ որ տարակոյս չկար, թէ Ամերիկան Քրանիայի



բաժին պիտի դառնար: Այս կը նշանակէր Բիշե-  
լիոյն և Լոյոլայն սկզբանց տիրութիւնն. այն ժա-  
մանակ աղետապետականները, բռնակալութիւնն  
և ճիշդութիւնները կարշաւէին ազատութեան երկի-  
րը: և ժողովրդի նախաձեռնութեան դէմ ամէն  
արգելքներ կը ստեղծուէին: Ապա թուում էր, թէ  
նոր Աշխարհը բաժին պիտի դառնայ հայրաւ,  
բայց արդէն նոյնմացող Սպանիայի Այն ժամանակ  
պէտք է թագաւորէր Ալբայի և Փիլիպպոսի բռնա-  
կալութիւնը: կեղծ աստուածապաշտներն և վանա-  
կաններէնէն և ճշիշ իշխանութիւնը: մասնէր Զար-  
գոտէն և մարդկանց դէմ շներ կատաղեցնէր:

Սակայն, ինչպէս որ գրուած էր աստուա-  
ծային մատենաւում, այնպէս էլ կատարուեցաւ.  
Ամերիկայի վերայ երեք չի ծածանի ոչ Ֆրան-  
սիայի ոսկէ շուշանը: ոչ Սպանիայի առիծն ու  
աշտարակը, այլ նախ անարատ մնացած Semp-  
er eadem-ը (միշտ անփոփոխ), ապա տոտղերն ու ե-  
րկիւնները, ձեր այժմեան ազգային դրօշակը:

Ամերիկան ժառանգ էր կոչուել Ասոր  
ծուց: ոչ թէ բռնակալութեան և արտօնեալ աղ-  
նււրապետութեան համար, ոչ թէ Սպանիայի կեղծ  
բարեպաշտութեան և Ֆրանսիայի սնամեղութեան  
համար, այլ Անգլիայի վերանորոգման,  
յառաջադիմութեան, ազատութեան և մի մեծ  
նոր ազգի բարդաւաճութեան համար:

Ե. Նրը որ Կորնուալիսը իւր սուրը յանձ-  
նեց Աւաշինդտոնին Եօրիտունի առման ժամա-  
նակ, ոմանք ամերիկացիք սառը վերաբերուեցին  
այս գէպին: չհասկանալով կատարուածի կշի-  
ռը: Աւաշինդտոնը դառնալով նոցա, ասաց յան-  
գիմանութեամբ. «Թող մեր թոռները մեզ յիշա-  
տակեն բարեբանութեամբ»:

Պարոնայք, արդէն հասել է ձեզ համար՝ որ  
ազգերի մէջ կրտսերագոյնն էք՝ դարաւոր փորձոյ  
հունձը. արդ քաղցեք: Եթէ դուք հասկանաք  
զօրապետի տուած խրատը, ձեզ կօրհնեն և կը  
փառաբանեն ձեր թոռները յաւիտանս: Պատ-  
մութեան գասերը զգուշացնում են. «Կործանեցի,  
կործանեցի, կործանեցի» — բազմեցաւ կրկնում է  
Տէր Աստուած, — մինչև եկեսցէ օր դատաստանի:

Երբ որ Բարեւոնում ազգերի ներկայացու-  
ցիւնները ընդ առաջ ելան Ալեքսանդրին, ասում  
են, թէ հռովմայեցւոց դեսպանները նոցա մէջ  
ամէնեցի աւելի աննշմարելի էին. բայց այնուհետև  
Յունաստանը խորտակուեցաւ, իսկ Հռովմը խեց  
նորա տկարացած ձեռքերից զայլոսնը: Բարեւոն,  
Ասորեստան, Կարթագէն, Յունաստան, Հռովմ՝  
էնն և անցան: Ովկիանի տիւրեր վերայ, ասում է  
Բէսկները, երեք մեծ ինքնակալութիւններ հառ-  
տապուեցան, մարդկային առաջին իշխանակա-  
լութիւնը ի վեր, որք են՝ Տիւրքոյ, Վենետիկ և  
Անգլիա: Առաջինը մնացել է միայն անունը,

երկրորդը — իլլատակներ, իսկ եթէ երրորդը մո-  
ռաւայ առաջինների վախճանը, աւելի ևս թըշ-  
ուառ ոչնչութեան մէջ կընկղմուի: մինչև անհա-  
տանելի բարձրութիւնները ամբառնալուց յետոյ:  
Արդեօք Միացեալ Նահանգների համար էլ ասում  
է՞ Անգլիային ուղղած այս նախազգուշութիւնը:

Գ. Ժամանակ չունիմ մի առ մի թուե-  
լու, թէ ինչպէս նախախնամութեան միջամը-  
տութեամբ ձեզ էլ հասել է այն ելեքտրական  
կայծը, որով տաննութեանը դարը արթնացաւ  
և փրկուեցաւ մեռելութիւնից: Ձեզ այցելել են  
այնպիսի նշանաւոր հիւրեր, որոնց սէրը պատիւ  
կարող է բերել ամենայն երկրին: Առաջինն է առ-  
պետ, ազատամիտ և մարդասէր շիտոն փի-  
լիսոփան — Լաֆայէտը: Այս գէպով դուք էլ  
մասն ու բաժին ստացաք Ֆրանսիական յեղափո-  
խութեան մարբագոյն փառքից և նոր փիլիսո-  
փայութեան լուսից: Ապա միթէ անյիշատակ  
թողնեմ եպիսկոպոս Բերկլէյին, փիլիսոփայական  
հանձարին, իսկ սորա հետ նաև Եկեղեցւոյ կամ  
Եկեղեցիների մեծամեծ սպասաւորներին, թէպէտ  
բառ իմ կարծեաց կայ միայն մի հօտ Քրիստոսի,  
որքան էլ որ բազմաթիւ փարափներ ունենայ այդ  
հօտը: Ո՞ր մէկի կրօնական յաւիտանութիւնը,  
անսահման անձնադոհութիւնը, անձնուրաց առա-  
քելութիւնը, ուսման և դիտութեան սէրը, խոր  
հաւատը, լայն աստուածաբանական հայեցողու-  
թիւնը, ներհուն իմաստութիւնը, ամենայնազգ  
զթասկրութիւնը գտվեմ:

Նմանապէս մի առ մի չեմ անուանի ձեր  
մեծ պետական մարդկանց անունները: Աւաշինդ-  
տոնի համար ասել են, թէ առաջինն է պատե-  
րալմում, առաջինն է խաղաղութեան մէջ, առա-  
ջինն է մարդկանց սրտերում: Նոյնը կը յարմարի  
ուրիշ շատ շատերին:

Օրհնուի մեծափառ անցեալը, ուր որ քա-  
ջութիւնը, ազատութիւնն և հաւատը հիւստուել  
են մի զօրաւոր շղթայ կազմելու համար, ազգային  
փառաւոր պատիւը հաստատելու համար:

Դ. Անցնեց այժմ ազատութեան պատե-  
րալմին: Վերջին ժամանակներում ամերիկացիք  
սկսեցին աւելի լաւ հասկանալ անգլիացիների  
հայեացքն այդ պատերազմի մասին: Դուք առաջ  
կարծում էիք, թէ անգլիացիների մէջ մնացել է  
գոթագոթական դառն զգացմունք պատերազմի  
պատճառով, իբր թէ նոցա չեն կարողանում  
առանց ամօթոյ և դայրոյթի յիշել Բուրգոնի:  
Սարատոգի կամ Կորնուալիսի անձնատուր լինի-  
լը: Յոյս ունիմ, որ 1895-ին էլ կարիք չկայ փա-  
րատելու այդպիսի անհիմն կարծիքները: Ես ինքս  
քաղցել եմ յուլիոյ 4-ին ձեր ազգային տօնի  
առիթով Վեստմինստերեան արքայութեան մէջ  
և նոյնն առաջարկել եմ անելու ձեր համբաւաւոր



հայրենակից դոկտոր Ֆիլիպս Բուրբոն:

Ձարմանալի է, որ ամերիկացիք դժուարութեամբ են ըմբռնում թէ իրանց զաղթականութեան հակառակորդ էր ոչ թէ Անգլիայի ժողովուրդը, այլ թաղաւորն ու կառավարութիւնը: որոնք սխալ էին հասկացել ժողովրդեան կամքը: Միթէ մոռացել էք, թէ ինչ է խօսել Բեռլինը, և թէ ձեզ պատմութեան պատկերներ է կոչել Բարբէն: Յիշեցէք ստորին խորհրդարանում նորա ասածները: որ երբեմն նոյն իսկ ձեր պարոնների աշակերտներին յայտնի էին. «Ձեզ խոցոտելու շարականութեամբ: Ո՛չ, ձեր հայածանցով նոքա բուսան Ամերիկայում: Ձեր սիրով մնում: Ո՛չ, նոքա ածեցին: որովհետեւ դուք միշտ խորթ էք եղել և անմոյթ: Միթէ դուք նոցա պաշտպանել էք: Ո՛չ, նոքա իրանք զէնք առան աշխուրհար ձեր իսկ պաշտպանութեան համար:»

Պարոնայք, ես ուրախ եմ, որ Ամերիկան ընդգրկեցել է: Եթէ երեք միլիոն մարդիկ այնչափ զուրկ լինէին ազատութեան զգացումից, որ յօժար կամօք անձնատուր լինէին ստրկութեան, նոքա գեղեցիկ հնար կը գտնային բոլոր մնացածին էլ ստրկացնելու: Դուք մեր ժառանգ՝ ձերն էք համարում, մենք էլ սովորեցանք ձերը՝ մեր սեպհականութիւն ճանաչել: Դուք մեզ յաղթեցիք Բենդէր Բիլլի մէջ, իսկ մենք այլ ևս չենք նախանձում այդ նոր Փարլամենտ:

Ես կը բացատրեմ ձեզ, թէ ինչու մեր պարտութեան վերայ մենք կարող ենք նայել առանց ամօթոյ: Անգլիան ժպտող երեսին խոստովանում է. «Եւ որդիք ինձ յաղթեցին» նոքա ինձնից ստացան իւրեանց ոյժը: Դուք պատերազմել էք մեզ հետ մեր հոգւով ոգևորուած:

Տօնեցէք ձեր յուլիսի 4-ը, որչափ որ կամենաք: Թող ձեր որդիք սովորեն ձեզ հետ ի միասին պարծանօք ասել. «Քոհմութիւն Աստուծոյ, ես էլ ամերիկացի եմ: Բայց համոզուած եմ, որ այսուհետեւ այլ ևս չէք դատարարակուի թշնամութեան ոգով ձեր մայր-երկրի դէմ:

Մի անգամ անսպաստի արարը հուրցրեց մի ճանապարհորդից, արդեօք անգլիացի չէ՞ նա: Ո՛չ պատասխանեց նա: ես ամերիկացի եմ: Այս պատասխանն առնելով՝ արարը լուռ բարձրացրեց երկու մատը, ուրեմն՝ թէ նոքա նման են, որպէս մատը մատին: Նա գիտէր, որ անգլիացին և ամերիկացին ունին նոյն լեզուն, նոյն բարբը, որ նոքա լեզուն են իրանց տենչերով, իրանց սովորները, նման են իրանց տենչերով, իրանց սովորութիւններով, յոյսերով, հաւատով, ծագմամբ և ծննդեամբ:

Ձեր ազատութեան պատերազմի մէջ էլ մենք տեսնում ենք Աստուծոյ մատը: Քրանկլինն ասում է. «Մեր աղօթքները անլուրի չմնացին: Բոլոր մարտակիցները վերջ էին նախախնամու-

թեան միջամտութեան յօգուտ մեր: Միթէ մոռացել ենք մեր Երկնային բարեկամին և այլ ևս նորա օգնութեան կարօտ չենք: Այս ասելով, թերեւս նա յիշում էր մի փոթորիկ, որ Տոմաս Պրինցի աղօթքով ցրուեց այն ծովապետ զ'Անվիլի նաւատորմիցը, որ երգուել էր քար ու քանդ անել Բաստոնը:

Ե. Ես անցնում եմ ձեր նորագոյն պատմութեան մեծակշիռ ճշմարտութիւն, ստրկութիւնը ջնջելու համար՝ Հիւսիսային և Հարաւային նահանգների մէջ ծագած, պատերազմին: Գարծեալ տեսնում եմ Տէր Աստու լոյսը, որով լուսաւորուած է ձեր ազգի տակաւ առ տակաւ պատմական զարգացումը:

Այն ինչ զարհուրելի ժամանակ էր, երբ որ հայրենիքը պառակտուած էր թշնամութիւնից: Քաղաքական ներքին պատերազմ, ազգային պատերազմ — օրտաճմիկ բռուկ են: Գիտենք, թէ ինչպէս ցուել էք այն զօհների համար, որոնց Տէր Աստուածը ընտրել էր Տենեսիի անտառներում և Պատմակի դաշարի ափերում: Թէ ինչպէս ամենջուր էք լսելով Բուլ Բէնի պարտութիւնը, ուր որ ձեր կամաւորները անշունչ ընկնում էին սովից և ծարաւից:

Մեր առաջնապետներում է Աշլինգտոնը, որ ներկայացնում էր մի հակայական հիւանդանոց: Դուք տակաւին չէք մոռացել այն ժամանակը, երբ որ «այնպէս վերադարձ է, որ էլ չի ապրի» դուժարեք բռուկը՝ գերեզմանական սարսուռ էին սիրում մայրերի և ամուսինների օրերում, երբ ամենայն ինչ զօհներեղ վաճառականը՝ իւր փական լանուսթի դռների վերայ կուրծով գրել է. «Ես քնացի պատերազմի դաշտը» երբ որ ծառերի տերեւները կարմիր էին ներկվում ոչ թէ միայն աշուներ պատճառով, և երբ որ ձեր երկիրը, իւր սոսկալի վիճակում, գեռ դարձեալ խնդալու սիրտ ունէր, որովհետեւ դիտէր, թէ ինչպիսի որդիներնց մայր է:

Ապա տեսէք, թէ ինչ անպարտելի վճռական ձայն է հնչում ձեր երգերի մէջ. «Ահա անվաճառ սուրբ ժառանգութիւն, անգուշակ պատմութիւն, անյայտ ապագայ, դնա և յաղթիք: Այսպիսի աշէտալի օրերում, կատաղի կուրծ փամանակ, մարդկանց սրտերում դարձեալ կենդանի էր մարդասիրութիւնն ու աշխուսթիւնը: Մի օր երկու թշնամանող վաշտերի երաժշտական խմբերը աշխատում էին իրար լույսնել, իւրաքանչիւրն իւր պատերազմական երգը թնդացնելով: Իսկ երբ որ նոցանից մէկը հնչեցրեց «Հալլենի տուն» ազգային երգը, միւսը չհակառակեց, այլ մի բոլոր առաջ թշնամին՝ այժմ սկսով միւրաւնեցաւ հնչած սիրելի երգին: Մի անգամ երկու թշնամանող բանակները հրձգութիւնը դադարե-



ցուցին: որովհետև պատահմամբ մի մանուկ մտել էր երկու հրուսդ շարքերի ասպարիզի մէջ: Մի անգամ էլ հիւսիսային բանակի Լի զօրապետը յողնութիւնից քնել էր ծառի շուքի տակ: Կողքից անցնող հարաւային բանակը, որպէս զի նորան անհանգիստ չառնէ: շշուկով ընկեր ընկերին հաղորդեց. «Կամաց: կամաց: Բոլորա քեռին քնած է: չլարթեցնէ՛ք գորան»: Միով բանիւ այս պատերազմի մէջ ևս անսնում եմ «Աստուծոյ ձեռքը» որ մարդու փակած սրտերը բաց է անում:»

Այլ և Աստուած ձեզ պարգևեց հարկաւոր մարդիկ ձեր առաջնորդութեան համար: Նա տուեց ձեզ Աբրահամ Լինկոլնի պէս հօգոր պարզ, իմաստուն: աներկիւղ ամբերիկացի: ղեքծակի սեղանտախտակից կոչելով նորան: ինչպէս երբեմն Դաւթին՝ իւր հօտից: Աստուած մորթեղործութիւնից հանեց ձեր անպարտելի Գրանտին: որ միշտ շեշտակի դէպի նպատակն է գնացել: անդառնալի պահանջ գնելով «Թշնամու անձնատուր լինին անպայման»: Փայտալաճառութիւնից: ուսուցչական ամբիւնից: Նա առաջ քաշեց հօգուով արի Զէմա Հարֆիլդին: Մարդասպանի ձեռքը կարծացրեց գոցա կեանքը: Բայց դոցա կոչման դործը կառարուելուց յետոյ: «Բազըք քուն է աշխատաւորի:»

Ձեր քաղաքական պատերազմը փառքով վերջացաւ: Հարաւն ընդունեց ձեր պայմաններն: վրան զի կռուի ելքի մէջ Աստուծոյ կամք կարգաց: Նա խոնարհեց իւր գլուխը և եղբայրական զաշնադրութեամբ սեղմեց ձեր ձեռքը: Խաղաղութեան ծիածանը նորից փայլեց փոթորիած երկնքի վերայ և պատահում քթօշակը ողջացաւ: Յոյս ունինք: որ այժմ դուք ընդ միշտ «մի գրօշակ» մի երկիր: մի ուրաւ մի ձեռք: մի ազգ էք: և ազատութեան ողին կը կոխտէ չորս միլիոն տարուկներ ջախջախելով շղթաները:

դ. Ուրախութեամբ և անտարակոյս երկորդարեքով դուք ձեր պատերազմական սրերը պատեանի մէջ էք դրել: Եթէ սուրը: ասաց Աշտինդտոնը: վերջին հնար էր ձեր անխախտութիւնը պահպանելու համար: դու պէտք է ամենեց առաջ անդործութեան մատնուի: հէնց որ ազատութիւնը հաստատուեցաւ:»

Մարկութիւնը ջնջելու համար վարած պատերազմը ումուր հիմք դարձաւ ձեր քաղաքական նշանակութեան համար: Ինչպէս որ պատանին: կռուի դաշտի մէջ երես առ երես մահուան հանդիպելով: աղայ մարդ է դառնում: այնպէս էլ պատերազմը զօրացրեց: խոհանարաց ձեզ և ձեր քաղաքականութեան տուեց ազգային արժանաւորութեան զրտակցութիւն: Ազգի մի խօսքով: աւելի քան միլիոնաւոր բանակը վայր գրեց զէնքը և իւր խաղաղական կեանքին վերադարձաւ:

անմուռն: «Յինցինասի պատմութիւնը: ասաց միտեր Գլադստոնը: հասարակ իրողութիւն է եղել: . . երկուայ զօրապետներն այսօր դարձել են հրատարակիչներ: պաշտանաներ և փաստաբաններ:»

Մարդկութիւնը աղնիւ դաս ստացաւ: Եւ դարձեալ կրկնում եմ: որ միայն կոչը չի սիննի նախախնամութեան քաղուկը: որ ձեզ առաջնորդել և պահպանել է: Քրանկլինն ասել է. «Եթէ մի ճնճուկ չի կարող ընկնել առանց Աստուծոյ հրամանի: միթէ կարող է պետութիւն ստեղծալի առանց նորա օգնութեան:»

«Դադարեցէք և պատեցէք փրկութեան Աստուծոյ:» հեռազրեց Լինկոլն նախադասը մի անմահաւորի դէպքի ժամանակ: «Այս գիրքը: ասաց Զէկսոնը: մատնացրեց անելով Աստուածաշունչը: այն ժայռն է: ոյի վերայ կանդնած է մեր հասարակապետութիւնը: Մի նոր հեռազնով հաղորդած առաջին բառերն էին: «Աստուած է ստեղծել ամենայն ինչ:» և հաղորդողն էր մի օրերդ: Եւ երբ որ մարդս ուղիւն էլ յաղթեց: և նորա մութ խորքումն էլ ելեքարական կոչքը թափանցեց: մի կիտաղնացի միւս կիտաղնաւոր աւետած բառերն էին: «Ծննդեան երգը: «Ովսաննա Բարձրելոյն: և յերկիր խաղաղութիւն: ի մարդիկ հաճութիւն:»

է. Եւ ինչպէս շուտ ազգայնեցաւ պատերազմի փեսաներից: Ինչպէս արագ էր ընթանում ձեր բարեկեցութիւնը: Իրաւամբ ասել է ձեր քահանաներից մէկը. «Դուք սերմ էք մանանիթի օրի ճիւղերը կը ծածկեն բոլոր երկիրը: Թուով ահաւ էք: Բայց ձեր դործը՝ Աստուծոյ դործ է: նորա օրհնութիւնը ձեզ վերայ է: և ձեր որդիքը կը բաղմանան երկրի վերայ:»

Հաս անգամ է կրկնում այն գրողը: թէ մի բռւռն մարդիկ մեծ աղբ են հիմնել: թէ մի կոյտ դերաններից ըսնել են հրաշայի քաղաքներ մի քանի տարուայ ընթացքում: թէ երկրի մի նեղ կտոր դառել է անագին պետութիւն: Երկու կողմից մեծամեծ ուղիւններով պատած: Ամէնը գիտեն: որ ձեր վաճառականութիւնը պաշարել է ողջ աշխարհներ և ուղիւններ: և Անգլիայի եթէ ոչ վտանգաւոր՝ գէթ բարեկամական մրցակից է դարձել: թէ ինչպէս ազատութեան մի դարու ընթացքում ձեր թիւը մի միլիոնից եղել է 50 միլիոն և այլն:

Դուք իրաւունք ունիք ձեզ վերադրել Տեներիսի խօսքերը. «Մեր թշնամիք ընկան: խոհնոցա ցանած իրօրիկ սերմը կենդանացաւ: գետնից վեր բուսաւ: և նորանից անեց մի յաղթանդամ ծառ: հազար ռոտերով խրաքանդուր կողմում և արեւդակին հասնող տաղաթով:»

ը. Այս նիւթական յաղթանակի բոլոր մա-



նրամասն ճօխութիւնները բնաւ արժէք չունին, եթէ մարդիկ բարձր չեն, քան իրանց ստեղծած բաները, և եթէ իրանց ձեռքի արտադրութիւնները չեն համարում որպէս նիւթ և գործիք կենաց բարձր նպատակներին ծառայեցնելու համար: Միւստան առեւ է: Սաղադութիւնն էլ յաղթութիւններ ունի: ոչ նուաղ մեծաքանակ քան պատերազմական յաղթութիւնները:

Այդպիսի յաղթութիւններով ևս միայնում էք: Թէ ինչ աշխուշ ժողովուրդ էք եղել: Ես ուզում եմ խաղաղ շահագործութիւններից մի քանիսն անուանել: Դուք ցոյց տուիք զարմանալի հնարագիտութիւն և աւելի արագ, քան Անտլանտիկի ափը կազմը: Բարդաւանցիք և դորմադրեցիք մեքենաբանութեան նորարարի գիտերը: Դուք հանգէս էք հանում մեծածախ և հոյակապ բարեգործութեանց բաղամթիւ օրինակներ: Ձան Հովորդի, Ջորջ Պիքոդի, Պեաներ Պուպերի, Ջան Հոպկինսի պէս մարդիկ, աշողին հարստութիւններ ունենալով: գործ էին ածում այն ոչ միայն իրանց ընտանիքներին: այլ և մայրենի բաղանջները հարբատայնելու համար: Չէր գրագործանները, որ դարգարում են հրաշալի գրացոյցակներով և ամէն յարմարութիւններով—ուսումնասիրութիւնը դիւրացնելու համար: ձեզ կը դարձնեն գիտանալի: Չէր դաստիարակութեան եղանակը—աշխարհի մէջ ամենից աւելի ողատաղոյնն է: Չէր մէջ զարգացում և դարգանում է պատաւական ինքնուրոյն գրականութիւնը: Դուք կարող էք պարճենալ ձեր բանաստեղծներով, ահա Բրիանտ, որ Ամերիկայի սերտը մտաւ գեղեցկութեան զըռնով: ահա Լոնդֆելտ, այն միմիակերպը, որ սքանչալիքով է երկու ազգերը, և սրի կիտարձանը զըռնում է Աւստրալիոյ բանաստեղծութեան մէջ: ահա հանճարեղ Էդգար Պոէ, ահա ներհուսազոյն Լովելլ, ահա ճշմարտութեան սերտար և ստուքիւն ատող Վիտորիէ: Չէր բովանդակների կարգում դուք կարող էք անուանել Ֆէլիմոր Պուպերին: որ մեր մանկութեան սիրելին էր: Նաթանիէլ Հատտորնին: որ անմահ է իւր երկասիրութիւններով: Դուք ունիք հումորիստներ—Ջեմս Հոլլէյ, Բրեա Գարա և Մարի Տուէն: ունիք պերճախոյս պատմադիրներ—Աշխնդտան Իրվինգ: Բանկրոֆտ, Պրեսկոտ, Մատլէյ, Պարկման, և սքանչելի քարոզիչներ, որպէս Սիէյ, Դանելլ, Պեքտոն և Ֆիլիպս:

Ոմանք տեսնելով ձեր եռանդուն, ամենայաղթ զարմանալի գործունէութիւնը, նայնք համեմատել են Նիւտոնի կատարել միեմանի հետ: և էլ դորձ կը գնեն այդ համեմատութիւնը, բայց կուեւրացնեն, թէ ջրվէժն իւր գեղեցկութեան տասից ինը մասը կը կորցնէ, եթէ պատկած չը լնէր ջրեղէն փոշու արծաթափայլ սիւնով: Այդ

սիւնը կարող է լինել ձեր ազգի ատենանական բախտի խորհրդաւոր պատկեր: Ջրվէժն զարդը՝ պայծառ ծիածանը՝ Նշան է Ամերիկայի յուսոյ: եթէ երբ և իցէ նորան տիրելու լինի յուսահատութիւնը:

Թ. Սակայն դուք կը լինի պնդել, իբր թէ ձեր ճանապարհը ոչ մի վտանգ, ոչ մի խոչ և խոչ չունի: Ես այդ բաները չեմ նկարագրի: օտարականը շատ բան չգիտէ ձեր աշխարհակեաց գաստիարակութեան, հայտնակեաց կարծիքի վերայ ծանրացող ճնշման: խաբեւայութեան դործագործներ և կաշառներ մտնին: Նորա համար այնքան էլ պարզ չեն ձեր ստորին կարգի մամուլի տաշեցուցիչ թեթեամտութիւնը, ստուքիւնը: Նկնողութիւնը:

Ճշմարիտ է, մենք կարգում ենք ձեր առաջնահարգ թերթերում հասարակապետութեան դէմ լարում թշնամութեանց, քաղաքական դայթաղութիւնների և առեւտրական անաղնուութիւնների մասին: հասարակաց կենաց մէջ մտած աւարտարութեան մասին: ամաւնութեան սրբութիւնը առ ոչինչ դնելու մասին: անդգոյշ շահագործութեան: խաղախութեան: արծաթաւէր դատաստանի մասին:

Չէր ամառադիրները, լրագիրները: լուսագոյն մատենագիրներն ատում են, թէ ժողովրդեան մի մասը կենտոնին սխալ նպատակներ է գիտում: ուր որ բարոյական բարեքները զոհ են բերում երկրաւոր հարստութեան համար: ոչ մի ցած միջոց արհամարիչ ճամբարելով: Նոքա ստում են, թէ հասարակապետութիւնը ըստ ինքեան այլ ձեւից լուսագոյն չէ, եթէ ազգը իմաստուն և առաքինի չլինի: Դուք ունիք ինքնավարութիւն: ազատութիւն: բայց այդ բանը պահանջում է աշխուշութիւն: Երկար խաղաղութեան և բաղմապատկոնող հարստութեան ժամանակները—նոյնպէս մեծամեծ վտանգների ժամանակներ են:

Հարկը տարի առաջ Փրանկլինը ձեզ զգուշացնում էր տեղական մանր կոստանցութիւնները: Ազատութիւնը առանց ազնուութեան և արդարութեան գոյութիւն չունի:

Ժ. Բայց և այնպէս ձեր քաղաքացիներեց նոյն իսկ տարակոտորները լուսագոյն ապագայի յոյսը չեն կորցրել: Եթէ Ամերիկայից էլ յոյս չունենանք, այս կը նշանակէ, թէ մարդկութիւնից յուսահատուել ենք:

Երկու պատճառով նոյն իսկ ծայրայեղ յոռեանքը չը պէտք է յուսահատուի Ամերիկայի արդարայի մասին: Առաջինն այն է, որ ձեր կառավարութեան զեկը արժանաւոր մարդկանց ձեռքումն է: Երկրորդն այն է, որ դուք գիտէք մարդ՝ ողնիւ մարդ դաստիարակել:

Չէր կառավարութիւնը ստեղծուել է ազ-



որ ձեռք կը լուսավայելէ Իւր սուրբ Բանի մէջ: Ոչ  
լիւսեալք: ոչ Կալուկներ լրել չեն ըմբռնել Տէր  
Աստուծոյ խօսքերէն իմաստը: Նոր հանդամանքներն  
ուսուցանում են նոր պարտականութիւններն: ա-  
ռաջուայ բարին ու լաւը՝ ժամանակով անտեղի  
է դառնում: Ով որ չի ուզում ճշմարտութիւնեց  
յետ մնալ, պէտք է միշտ ձգտէ յառաջ և գէ-  
պի ղերէ:

Ազգերը պէտք է սովորեն ուղիղ հասկանալ  
իրանց իրաւունքը: Երկուհարիւր յիսուս տարի ա-  
ռաջ Պիտեր Բերկէյն ասել է մի բուռն վարան-  
դեալներին. «Ամենայն ազգ որ և է առաւելութիւն  
է ուղղում ստանալ: Մեզ ուրիշ ինչ առաւելու-  
թիւն է մնում: քան սրբութիւնը: Թուով գե-  
րազանցել չենք կարող, մենք քիչուոր ենք: Ոյժը  
մեր կողմը չէ: մենք ամենատկար ենք, իսկ հա-  
րսաստութեան դալով, աշխարհի ազգերի մէջ մե-  
զանց աւելի աղքատը չկայ: Ոչ թէ դերազանցել  
ուրիշներեց, նոյն իսկ նոցա հաւասարուել չենք  
կարող, և եթէ մեր հաւատը և արդարութիւնը  
քիչ լինի, ազգերի մէջ մենք կը լինինք ամենա-  
մերժաւոր: Ուրեմն կատարելագործուինք, և թող  
կատարելագործութիւնը լինի մեր պսակը յա-  
ւիտեանս»:

Սակայն այն ժամանակից ի վեր ինչպէ՞ս ա-  
մենայն ինչ փոխուել է: Թուով դուք շատ բազ-  
մացել էք: Ուժով ամենազօրաւոր և ամենահա-  
րուստ էք երկրագնդի քրիստոնէայ ազգերի մէջ:  
Դուք ըստ ամենայնի գերազանց էք մեզ ազգե-  
րեց: Ինչո՞ւ. կարծում եմ, առաւելագէտ այն  
պատճառով, որ ձեր նախահայրերը երկեղած  
էին:

Միթէ Ամերիկան սերտ կուենայ արճամար-  
հել այն աստիճանները, որով բարձրացել է մինչև  
իւր մեծութիւնը: Չեմ հաւատում, նա իւր նախ-  
կին արդարամտութեան փոխարէն չի ընտրել մահ  
և դժոխք: Նա չի թողնի որ խաթամութիւն աղա-  
ղակներով և ազմուկներով խլանան սահաւածիւ-  
բարի և իմաստուն ձայները: Նա կը լսի երեք  
մեծ հրեշտակներին—պատմութեան, խղճին և  
փորձաւորութեան:

Աստուծոյ օգնութեամբ, դուք մեզ հետ և  
մենք ձեզ հետ, ամէն կերպ կաշխատենք նորոգել  
մեզ և մեզ հետ ի միասին մարդկութիւնը: Այն  
ժամանակ անձնապաշտութիւնը մահացու հար-  
ուած կը ստանայ և անցեալ չարքները միայն  
պատմութեան յիշատակարաններում կը մնան,  
միշտ ոտքոտ ազգելով, թէ աւաղ երբեմն  
դուր իշխող են եղել:

Ս. Մ.

## ՄԻ ՀԱՐՏԵՒԱՆՅԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ.

«Արարատի» նախորդ համարում Շնորհ. Գ.  
Տէր Մկրտչեան հրատարակելով «Ակայութիւն  
որոյն Գրիգորի պարսիկ» պատմական յիշատա-  
կարանը՝ իւր յօդուածի մէջ բերել էր երկու հա-  
տուած Ներսէս Բ. Աշտարակեցի կաթողիկոսի  
թղթերեց, Հ. Ալիշանի «Արարատ»-ից առնելով:  
«Արարատ»-ի սրբազրոյղը իւր կողմից ծանօթութիւն  
էր աւելացրել, որ այդ թղթերն արդէն ամբողջու-  
թեամբ լոյս են տեսել Իզմիրեան Յանձնաժողովի  
«Գիրք թղթոց» հրատարակութեան մէջ: Երեւի նա  
չէր մտաբերում, որ նոյն թղթերից կարեւորագոյնն  
ու թէ Շն. Գ. Տէր Մկրտչեանին հարկաւոր եղած  
և թէ իւր աւելացրած բոլոր տեղեկութիւնները  
պարունակողը լոյս էր տեսել անցեալ տարի  
«Արարատ»-ի մէջ\*. բոցց միթէ չէր մտաբերում  
նաեւ «Արարատ»-ի մշտական աշխատակից Շն. Գ.  
Տէր Մկրտչեան, որի մի ուրիշ յօդուածը կազմ-  
նակի կերպով առիթ էր եղել նոյն թղթի հրա-  
տարակութեան: Աստուծոյ օգնութեամբ, որ այդ թուղ-  
թը հրատարակելիս մենք չգիտէինք, թէ նորա մի  
քանի տղերք ապուած են արդէն «Արարատ»-ի  
մէջ. ո՞ւմ մարից կանցնէր, թէ այնպիսի յայտնի  
ընդունութեան համար, ինչպէս է Ազատ գետի  
հովտի կամ Գեառնիքաւորի ամբողջ ժողովուրդ-  
ը հետ նաեւ մի քանի առն ասորիներէ մեր  
դարու սկզբներին Պարսկաստանից գաղթած ու  
հին Գուլիս համարուող տեղում բնակութիւն  
հաստատած լինելը,—Հ. Ալիշան խոր հնութեան  
մէջ հետքեր կրօնէր և այն անմեղ փաստը գը-  
տած կլինէր, որ Զ. դարու կիսին Ներսէս Բ.  
Գուրնում ժողով է գումարել և խափիկ նեստո-  
րականներին հաշտելու միջոց տուել: Իսկ Շնորհ.  
Գ. Տ. Մկրտչեանին յայտնի է եղել այդ: Ինչպէս  
կարող էր ուրեմն «Արարատ»-ի մէջ լոյս տեսած  
ամբողջ թուղթը իրեն կից յօդուածով փախչել  
նորա պէս հմուտ և մանրաբնիկ բանասէրի աչ-  
քից: Սակայն քանի որ մեր կարծիքով գիտական  
ուսումնասիրութեան համար բոցց անդիսու-  
թիւնեց ուրիշ ոչ մի պատճառ չի կարող լինել  
եղեկութիւնը ծածկելու՝ պարտք համարեցինք  
յիշել այստեղ այդ պարզ եղեկութիւնը:

Բող ներուի մեզ ապա՞ Շնորհ. Գ. Տէր  
Մկրտչեանի յօդուածի մասին մի անգամ խօսե-  
լուց յետոյ, մի կէտի վերայ ևս ուշադրու-  
թիւն գարծնել: Նա՞ գուցէ Հ. Ալիշանին հե-  
տեկով, ընդունում է առանց այլեայլու-  
թեան, թէ Գրիգոր Ռափիկ անուան նուիրած  
վանքը Գուրնում է եղել, մինչդեռ Ներսէս Բ. ի